Արձանագրություն N 4

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ձմեռային անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

14 նոյեմբերի 2024թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վ.Թորոսյան, Գ.Հարությունյան, Հ.Հարությունյան, Ա.Լալայան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Սաղաթելյան

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ներկայացված հայցադիմումի վերաբերյալ

«Արպանիվ» ՍՊԸ-ն 16.09.2024 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ «Արպանիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ԵԴ2/7722/02/24 վճռով «Արպանիվ» ՍՊԸ-ի հայցադիմումը բավարարվել է:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ԵԴ2/7722/02/24 վճիռը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը չի բողոքարկում նշված վճիռը, գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել Ընթացակարգը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

2. Տեղեկություն նիստը կասեցնելու մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների էլեկտրոնային http://eauction.armeps.am համակարգում Ընթացակարգի կարգավիճակը նշված է որպես «ավարտված», ինչով պայմանավորված հնարավոր չէ իրականացնել «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման, պայմանագրի ծանուցման և կնքման գործառույթները, Գնահատող հանձնաժողովը որոշեց 14.11.2024թ. նիստը կասեցնել, Ընթացակարգի գործընթացը շարունակելու նպատակով դիմել Լիազոր մարմնին՝ http://eauction.armeps.am համակարգում գործընթացը շարունակելու գործառույթը կարգավորելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաջորդ նիստը հրավիրել Լիազոր մարմնից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

Հանձնաժողովի

Նախագահ՝	_____	Վարդան Հարությունյան
անդամներ՝	_____	Վարդան Թորոսյան
	_____	Գարիկ Հարությունյան
	_____	Հրայր Հարությունյան
	_____	Անժելա Լալայան
քարտուղար՝	_____	Հերմինե Սաղաթելյան